ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2022-02-02

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԻՆՈԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» Հասարակական կազմակերպություն (ՀԿ)

Գրանցման համար	**211.171.05364**
Հիմնադրման տարի	**1992**
Գրանցման ամսաթիվ	**2010-05-17**
Գործունեության ժամկետ	**Անժամկետ**
Կարգավիճակ	**Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:**
Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ)	**39360329**
Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)	**02511007**
Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովադրի ծածկագիր)	**43175364**
Էլ. փոստ	**unikino@yandex.ru**
Կայք	**www.uca.am**

Գտնվելու վայրը

Հասցե	**ՎԱՐԴԱՆԱՆՑ Փ. / Շ / 18 ԿԵՆՏՐՈՆ 0010 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ**
Հեռախոս	**+374 10 540528**

Գործադիր մարմնի ղեկավար

Պաշտոն	**Նախագահ**
Անուն Ազգանուն	**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ**
Անձնագրային տվյալներ	**BA0956043 2014-08-12 069**
Հասցե	**ՇԻՐԱԿԻ 4-ՐԴ ՆՐԲ. / Շ / 10 / 14 ՇԵՆԳԱՎԻԹ 0048 ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ**

Տեղեկություններ իրավահաջորդության / իրավանախորդության վերաբերյալ

Իրավանախորդ(ներ) **գրառված չեն**

Պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխություններ

Գրանցման ամսաթիվ	Փոփոխություններ
2010-05-17	**Անվանման փոփոխություն**
2012-01-25	**Կանոնադրության թվայնացում**
2014-11-24	**Անվանման փոփոխություն** **Կանոնադրության փոփոխություն (նոր խմբագրությամբ կանոնադրություն)** **Գործադիր մարմնի ղեկավարի տվյալների փոփոխություն**
2017-08-08	**Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն**
2017-10-20	**Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն**
2017-12-12	**Կանոնադրության փոփոխություն (նոր խմբագրությամբ կանոնադրություն)**
2022-02-02	**Անվանման փոփոխություն** **Պաշտոնական կայքի և/կամ էլ.փոստի մասին տեղեկությունների գրառում** **Կանոնադրության փոփոխություն (նոր խմբագրությամբ կանոնադրություն)**

Քաղվածքը տրամադրող՝ **Լուսինե Պողոսյան**

ստորագրություն

Քաղվածքի տրամադրման ամսաթիվ՝ **02-02-2022**

05

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՆԻՔ

Կազմված է 27.11.2022թ.

Տպագրված է ընդամենը 2 օրինակ

Օրինակ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱՖԻՍՏՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

27.11.2021թ. կայացած

ժողովի որոշմամբ

Նախագահ՝

Հարություն Ռուբենի Խաչատրյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ արդարադատության նախարարության կոլեգիայի 18.11.1992թ. թիվ 51/10 որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ

«17» մայիսի 2010թ.
Գրանցման համար 211.171.05364
Հարկ վճարողի հաշվառման համար
02511007

12.12.2017թ. գրանցված կանոնադրության թիվ 001-2 փոփոխությունը գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից

«02» փետրվարի 2022թ.

Աշխատակից

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԻՆՈԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

2021թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. **«Հայաստանի կինոգործիչների միություն»** հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Միություն) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա պետությունների քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և/կամ իրավաբանական անձանց (ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ ունեցող) ստեղծագործական հասարակական միավորում է, որն իրենց շահերի ընդհանրության հիման վրա, կամավորության, անհատական անդամակցության սկզբունքով, օրենքով սահմանված կարգով միավորում է պրոֆեսիոնալ կինոգործիչների:

1.2. Միությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և իրավական ակտերով (այսուհետ՝ Օրենսդրություն), սույն կանոնադրությամբ:

1.3. Միության գործունեության սկզբունքներն են օրինականությունը, կամավորությունը, իրավահավասարությունը, շահերի ընդհանրությունը, կոլեգիալությունը, ինքնակառավարումը, բարեխղճությունը, խտրականության բացառումը, հաշվետվողականությունը, հրապարակայնությունը:

1.4. Միությունն իր գործունեությունը ծավալում է Հայաստանի Հանրապետությունում, այլ պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

1.5. Միությունն ազատ է՝ որոշելու իր ներքին կազմակերպական կառուցվածքը, գործունեության առարկան, ձևերը և նպատակները:

1.6. Միությունն իր պետական գրանցման պահից ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ, որպես սեփականություն կարող է ունենալ առանձնացված գույք, տնօրինում է իրեն պատկանող գույքը, ունի ինքնուրույն հաշվեկշիռ, հաշվարկային և այլ հաշիվներ բանկերում, կարող է ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.7. Միությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:

1.8. Միությունը պատասխանատու չէ պետության պարտավորությունների համար, ինչպես նաև պետությունը պատասխանատու չէ Միության պարտավորությունների համար:

1.9. Միությունը պատասխանատու չէ իր անդամների պարտավորությունների համար, ինչպես նաև Միության անդամները պատասխանատու չեն Միության պարտավորությունների համար:

1.10. Միությունն ունի իր անվանմամբ կլոր կնիք, Միության խորհրդանիշով դրոշմ, տիտղոսաթերթեր:

1.11. Միությունն ունի խորհրդանիշ և դրոշ: Միության խորհրդանիշը ենթակա է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցման և հաշվառման:

1.12. Միության հայերեն լրիվ անվանումն է՝ **«Հայաստանի կինոգործիչների միություն» հասարակական կազմակերպություն,** կրճատ՝ **«Հայաստանի կինոգործիչների միություն»**, հապավումը՝ **ՀԿՄ:**

1.13. Միության գտնվելու վայրն է 0010, ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փ., 18 շ.:

2. ՄԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1 Միության գործունեության առարկան է.

2.1.1. Հայաստանի Հանրապետությունում կինոոլորտի բոլոր ուղղությունների զարգացման համար նպաստավոր պայմանների, անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծմանն աջակցելը, կինոմիջավայրի և ստեղծագործական մթնոլորտի ձևավորմանն օժանդակելը, կինոյի հանրայնացմանն ու քարոզչությանը միտված գործունեությանը նպաստելը:

2.1.2. Պետության կողմից տարվող մշակութային, մասնավորապես՝ կինոքաղաքականության հայեցակարգային ծրագրերի ստեղծմանն ու մշակմանը մասնակցային կերպով աջակցելը, ոլորտային օրենքների և որոշումների, իրավական այլ ակտերի ստեղծման գործում կինոգործիչների մասնակցայնությանը նպաստելը, այդ մասին նրանց մշտական տեղեկատվության ապահովումը, ինչպես նաև կինոգործիչներին մտահոգող հարցերը և պետության կողմից վարվող կինոքաղաքականության վերաբերյալ նրանց կարծիքները պետական մարմիններին ներկայացնելը:

2.2. Միության նպատակներն են.

2.2.1. Նպաստել և աջակցել հայկական կինոյի՝ որպես ազգային մշակույթի կարևոր բաղադրիչի, որն ունի համազգային և միջազգային նշանակություն, մաս է կազմում մշակույթների երկխոսության, ժողովուրդների միջև փոխգործակցության և փոխըմբռնման, բոլոր ժանրերի և տեսակների զարգացմանն ուղղված քայլերին:

2.2.2. Նպաստել և աջակցել կինոոլորտում կառուցվածքային փոփոխությունների և զարգացման ռազմավարությունների, նպատակային ներդրումային քաղաքականության մշակմանը և իրագործմանը, նորարարական գաղափարների ներդրմանը, կինոոլորտի արդիականացմանը, մրցունակ կինոարտադրանքի թողարկմանը, միջազգային կինոինդուստրիայում Հայաստանի կինոոլորտի, ազգային ֆիլմի ինտեգրմանը, առաջխաղացմանը:

2.2.3. Օրենքով սահմանված կարգով աջակցել Միության անդամների սոցիալական, քաղաքացիական, մասնագիտական, աշխատանքային, հեղինակային և խառը իրավունքների, ինտելեկտուալ սեփականության և օրինական շահերի պաշտպանությանը, ստեղծագործական գործունեության համար պայմանների ստեղծմանը և բարելավմանը:

2.2.4. Նպաստել պրոֆեսիոնալ շահերի պաշտպանության շուրջ կինոոլորտի մասնագետների համախմբմանը, ըստ մասնագիտությունների պրոֆեսիոնալ գիլդիաների ստեղծմանը *(Գիլդիաների գործունեության կանոնները, կանոնակարգերն ու կարգերը սահմանվում են Վարչության կողմից),* նրանց միջև ստեղծագործական կապերի ամրապնդմանը և զարգացմանը:

2.2.5. Իր կանոնադրական նպատակների իրագործման, ինչպես նաև կինոյի քարոզչության, հանրայնացման նպատակով նպաստել և աջակցել փառատոների, ստուգատեսների, կոնֆերանսների, ստեղծագործական հանդիպումների, ֆիլմերի դիտումների և քննարկումների, կոնգրեսների, սիմպոզիումների, սեմինարների, ժողովների, խորհրդակցությունների, ցուցահանդեսների, տոնավաճառների, շուկաների, աշխատարանների կազմակերպմանը, անհրաժեշտության դեպքում կազմակերպել այդպիսիք:

2.2.6. Միության և/կամ այլ կազմակերպություններից ներգրավված միջոցներով ինքնուրույն և/կամ համատեղ ձեռնարկել միջոցներ՝ ապահովելու համար սոցիալական, տնտեսական, ֆինանսական, այլ անհրաժեշտ պայմաններ՝ ի շահ Միության և նրա անդամների ստեղծագործական բնականոն գործունեության, իրականացնել Միության անդամների կարիքների աջակցությանն ուղղված սոցիալական ծրագրեր. *(Սոցիալական*

ծրագրերի իրականացման կանոնները, կանոնակարգերն ու կարգերը սահմանվում են Վարչության կողմից):

2.2.7. Պետական համապատասխան կառույցների հետ գործակցությամբ նպաստել և աջակցել կինոֆոնդի, կինոժառանգության պահպանման, ընդլայնման, հանրայնացման խնդիրների լուծմանը:

2.2.8. Նպաստել հայկական կինոարտադրանքը, հայկական կինոժառանգությունը, ազգային ֆիլմերը ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս կազմակերպվող փառատոներում, ստուգատեսներում և այլ համապատասխան միջոցառումներում ներկայացնելուն, անհրաժեշտության դեպքում՝ ներկայացնել դրանք:

2.2.9. Նպաստել և աջակցել կինոփառատոնային շարժման կայացմանը, ընդլայնմանը և զարգացմանը Հայաստանում, իր հնարավորությունների սահմաններում աջակցել հայաստանցի կինոգործիչների մասնակցությանը միջազգային փառատոներում, ստուգատեսներում, մրցույթներում, այլ միջոցառումներում:

2.2.10. Նպաստել և աջակցել Միության, Միության անդամ կինոգործիչների միջազգային կապերի ձևավորմանը, զարգացմանն ու ընդլայնմանը, տեղեկատվական և ստեղծագործական փոխանակություններին, միջազգային փոխանակություններին կինոոլորտում, դրանցում ներգրավել միջազգային համբավ ունեցող կինովարպետների՝ ծանոթանալու նոր տեսալսողական, տեխնոլոգիական կինոպրոցեսներին, կազմակերպել և ուսումնասիրել նոր, առաջավոր փորձը, նոր տեխնոլոգիական լուծումները:

2.2.11. Նպաստել տեսալսողական արտադրանքի ստեղծման, տիրաժավորման, տարածման և իրացման նախագծերի կայացմանը, աջակցել դրանց իրականացմանը:

2.2.12. Ստեղծել ակումբներ՝ հայկական կինոյի, կինոժառանգության, ազգային ֆիլմերի աջակցության և հանրայնացման համար ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս, անցկացնել շնորհանդեսներ, այլ միջոցառումներ, գովազդել անցկացվող միջոցառումները: Կինոյի հանրայնացման նպատակով՝ իր ենթակառուցվածքների (դահլիճներ, ցուցասրահներ, կինոսրահներ) օգտագործմամբ, ստեղծել կինոցուցադրությունների համակարգ, իրականացնել կինոթատրոնի գործունեություն, մասնակցել կինովարձույթի գործող համակարգերին, անհրաժեշտության դեպքում ստեղծել այդպիսիք:

2.2.13. Նպաստել և աջակցել կինոոլորտի մասնագիտությունների ստեղծագործական դպրոցների, կուրսերի, խմբերի, հոսքերի, աշխատարանների, լաբորատորիաների,

աքսելերատորների, հանգույցների հիմնմանը և ստեղծմանը, անհրաժեշտության դեպքում հիմնել և/կամ ստեղծել այդպիսիք, իրականացնել կրթական գործունեություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, անցկացնել վարպետաց դասեր, առաջավոր մեթոդոլոգիաների, փորձի ներդրման առումով նպաստել և աջակցել կինոոլորտի ուսումնական հաստատությունների որակի բարձրացմանը, կադրերի պատրաստմանը և վերապատրաստմանը:

2.2.14. Իր միջոցներով և/կամ այլ մասնակցությամբ հնարավորինս աջակցել Միության երիտասարդ անդամներին, կինոոլորտում ընդգրկված ուսանողներին՝ անցնելու կրթական, ստեղծագործական վերապատրաստման, որակավորման, մասնագիտական գիտելիքների կատարելագործման գործունեություն օտարերկրյա կինոկրթական հաստատություններում, կինոստուդիաներում, միջազգային փառատոներում, այդ նպատակներով հյուրընկալել օտարերկրյա մասնագետների:

2.2.15. Իր բոլոր կարողություններով աջակցել երիտասարդ կինոգործիչներին, նպաստել երիտասարդական կինոյի, երիտասարդական հարթակների զարգացմանը, երիտասարդ ստեղծագործողների համախմբմանը, նրանց նախաձեռնությունների առաջխաղացմանը:

2.2.16. Նպաստել և աջակցել ֆիլմերի, սցենարների, օպերատորական, ռեժիսորական, դերասանական և այլ կինոմասնագիտությունների գծով մրցույթների անցկացմանը, անհրաժեշտության դեպքում անցկացնել այդպիսիք, իր միջոցներով և/կամ այլ կազմակերպությունների հետ համապատասխան պայմանագրերի կնքմամբ իրականացնել հրատարակչական, լրատվական, տեղեկատվական, քարոզչական, գովազդային, հանրային կապերի զարգացմանն ուղղված գործունեություն:

2.2.17. Համագործակցել մշակութային, ստեղծագործական միությունների, ստեղծագործական այլ կազմակերպությունների հետ:

2.2.18. Ներկայացնել Միության և իր անդամների շահերը պետական և հասարակական կազմակերպություններում, տարբեր ատյանի դատարաններում:

2.2.19. Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել Միությանը պատկանող հիմնական միջոցների, գույքի պահպանման համար:

2.2.20. Օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկություններ ստանալ կինոոլորտի, Միության անդամների իրավունքների և շահերի պաշտպանության հարցերին վերաբերող նորմատիվ-իրավական ակտերի նախապատրաստման և ընդունման մասին, նախաձեռնել և մասնակցել մշակութային քաղաքականությանը, կինոոլորտին վերաբերող օրենքների, ոլորտային այլ օրենքների, նորմատիվ ակտերի մշակման և քննարկման աշխատանքներին, անցկացնել կինոոլորտում Միության կանոնադրական

նպատակներին վերաբերող օրենքների և օրենսդրական ակտերի նախագծերի, այլ ծրագրերի և նախագծերի հասարակական անկախ փորձաքննություն (էքսպերտիզա):

2.2.21. Միության շրջանակներում հիմնել և շնորհել մեդալներ, Միության Պատվավոր և օտարերկրյա անդամի տիտղոս՝ համապատասխան վկայագրով, *(Միության Պատվավոր և օտարերկրյա անդամի կարգավիճակը սահմանվում են Վարչության կողմից)*, այլ մրցանակներ, շքանշաններ, պարգևներ, խրախուսման այլ միջոցներ, սահմանված կարգով առաջարկություններ ներկայացնել Միության անդամներին, Միության Պատվավոր և Օտարերկրյա անդամներին պետական պարգևներ և պատվավոր կոչումներ շնորհելու մասին:

2.2.22. Ներգրավել հայ և օտար ներդրողների՝ Միության նախագծերի և ծրագրերի իրականացման համար:

2.2.23. Իր ծրագրերի իրագործման նպատակով՝ իր միջոցներով և/կամ այլ կազմակերպությունների հետ համապատասխան պայմանագրերի կնքմամբ, պետական կառույցների, միջազգային կազմակերպությունների, անհատ ներդրողների ներգրավմամբ մասնակցել կինոտեսասրահների, կինոկենտրոնների, կինոակումբների, կինոթատրոնների, կինոթանգարանների, այլ կինոկառույցների կազմակերպմանը, հիմնադրմանը, անհրաժեշտության դեպքում հիմնադրել և ստեղծել այդպիսիք, իրականացնել տվյալ ոլորտներին հատուկ գործունեություն՝ օրենքով սահմանված կարգով:

2.2.24. Իրականացնել օրենսդրությամբ չարգելված տարաբնույթ այլ ծրագրեր:

3. ՄԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Միությունը իրավունք ունի՝

3.1.1. Իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ, դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող:

3.1.2. Բացել բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով:

3.1.3. Ստեղծել այլ կազմակերպություն կամ լինել նրա մասնակից:

3.1.4. Ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, ինչպես նաև այլ հիմնարկներ:

3.1.5. Տեղեկատվություն տարածել իր գործունեության մասին:

3.1.6. Կազմակերպել և անցկացնել խաղաղ, առանց զենքի հավաքներ:

3.1.7. Օրենքով սահմանված կարգով ներկայացնել ու պաշտպանել իր և իր անդամների, շահառուների և կամավորների իրավունքներն ու օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում:

3.1.8. Համագործակցել այլ կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային կամ օտարերկրյա կազմակերպությունների հետ, ինչպես նաև համակարգված գործունեություն ծավալելու, ընդհանուր շահեր ներկայացնելու և պաշտպանելու նպատակով այդ կազմակերպությունների հետ ստեղծել Կազմակերպություն կամ անդամակցելու նրանց ստեղծած Կազմակերպությանը՝ պահպանելով իր ինքնուրույնությունը և իրավաբանական անձի կարգավիճակը.

3.1.9. Իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն, ստեղծել առևտրային կազմակերպություններ կամ մասնակից դառնալ դրանց, իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն՝ իր կողմից հիմնադրված տնտեսական ընկերությունների միջոցով, այդ նպատակով տնօրինել իր գույքը և գործունեության արդյունքները:

3.1.10. Իր նպատակներին համապատասխան՝ ունենալ շահառուներ, ինչպես նաև իր աշխատանքներում ներգրավել կամավորների:

3.1.11. Ստեղծել և ունենալ միջազգային այլ կապեր, այդ թվում՝ կնքել համաձայնագրեր օտարերկրյա և միջազգային ոչ առևտրային ոչ կառավարական կազմակերպությունների հետ, անդամակցել դրանց, իր անդամներին և այլ անձանց գործուղել արտասահմանյան պետություններ, հրավիրել այլ պետություններից քաղաքացիներ, ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ այլ պետություններում՝ նրանց օրենսդրությամբ սահմանված կարգով, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

3.1.12. Ձեռք բերել, վարձակալել, օգտագործել և օտարել անշարժ և շարժական գույք և գույքային իրավունքներ:

3.1.13. Օտարել, վարձակալության, կամ անվճար օգտագործման հանձնել Միությանը պատկանող ցանկացած անշարժ և շարժական գույք:

3.1.14. Ինքնուրույն կազմավորել և տնօրինել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ վարկեր, դրամաշնորհներ, նվիրատվություններ:

3.1.15. Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում կազմակերպել դասընթացներ, դասախոսություններ, սեմինարներ, հասարակական լսումներ, քննարկումներ և իր կանոնադրական նպատակների ու խնդիրների իրականացման համար անհրաժեշտ այլ միջոցառումներ:

3.1.16. Կատարել օրենքով չարգելված այլ գործունեություն:

3.2 Միությունը պարտավոր է՝

3.2.1. Վարել իր անդամների և կամավորների հաշվառումը:

3.2.2. «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքում ենթարկվել պարտադիր աուդիտի:

3.2.3. Օրենքի պահանջների կատարումը ստուգելու համար Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի պատճառաբանված պահանջով ողջամիտ ժամկետում նրան տրամադրել իր կառավարման մարմինների որոշումների պատճենները կամ գործունեության մասին այլ փաստաթղթեր: Հայաստանի Հանրապետության մշակույթի ոլորտում պետական կառավարման լիազորված մարմնի պատճառաբանված պահանջով ողջամիտ ժամկետում նրան տրամադրել Միության բարձրագույն և մյուս մարմինների որոշումների պատճենները, Միության գործունեության մասին այլ փաստաթղթեր, թույլատրել այդ մարմնի ներկայացուցիչներին ներկա գտնվելու Միության ժողովին:

3.2.4. Օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններին:

3.2.5. Միության անդամի պահանջով ոչ ավելի, քան պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, նրան հնարավորություն տալ ծանոթանալու Միության կանոնադրությանը, հիմնադիր այլ փաստաթղթերի, համագումարի որոշումներին կամ տրամադրել դիմողին թղթային կամ էլեկտրոնային եղանակով՝ պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Սույն կետում նշված տեղեկությունները, փաստաթղթերը տրամադրելու

համար կարող է գանձվել վճար, որը չի կարող գերազանցել դրանք տրամադրելու համար կատարված ծախսերը:

3.2.6. Միության կանոնադրության փոփոխությունների, ինչպես նաև վերակազմակերպման կամ լուծարման դեպքերում՝ օրենքով սահմանված կարգով դիմել իրավաբանական անձանց պետական գրանցման մարմնին (այսուհետ՝ Գործակալություն):

3.2.7. Պաշտոնական կայքի առկայության դեպքում հասցեի վերաբերյալ ծանուցել Գործակալությանը:

3.2.8. Իր գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները ներկայացնել Միության նախագահի հաստատմանը՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնությունը:

3.2.9. Վարել ձեռնարկատիրական գործունեության առանձնացված հաշվառում՝ դրա վերաբերյալ տեղեկությունները ներառելով օրենքով նախատեսված ֆինանսական և այլ հաշվետվություններում: Միության կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ստացված շահույթը օգտագործվում է միայն Միության կանոնադրական նպատակների ուղղությամբ:

3.2.10. Կատարել օրենքով սահմանված այլ պարտականություններ:

4. ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԴԱՌՆԱԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

4.1. Միության անդամ կարող են դառնալ տասնութ տարին լրացած պրոֆեսիոնալ կինոգործիչ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, ինչպես նաև տեսալսողական ոլորտում աշխատող, կինոմասնագիտություններ և (կամ) կինոկրթություն ունեցող, տեսալսողական ոլորտում աշխատող ստեղծագործական այլ մասնագիտություններ ունեցող գործիչներ՝ խմբագիրներ, կինոգետներ, կինոքննադատներ, կինոարխիվային գործի, պրոդյուսինգի, կինոտեխնիկայի, կինոարտադրության, կինովարձույթի, կինոցուցադրության մասնագետներ, ՀՀ օրենսդրությամբ և միջազգային կոնվենցիաներով հեղինակային և խառը (հարակից) իրավունքի կրողներ, որոնք ընդունում են Միության Կանոնադրությունը, անդամակցում են Միության որևէ պրոֆեսիոնալ Գիլդիայի, ցանկանում են մասնակցել Միության և Գիլդիայի գործունեությանը, վճարում են մուտքի վճար և անդամավճար, եթե այդպիսիք սահմանված են:

4.2. Միության անդամ կարող են դառնալ հայկական կինոյի զարգացման գործում մեծ ավանդ ունեցող օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք:

4.3. Միության անդամ կարող են դառնալ իրավաբանական անձինք: Միությանը իրավաբանական անձանց անդամակցելու հանգամանքը չի ենթադրում իրավաբանական անձի անդամների և (կամ) նրա մասնակիցների ինքնստինքյան անդամակցություն Միությանը: Իրավաբանական անձը միության անդամ է դառնում և դուրս է գալիս անդամությունից իր իրավասու մարմնի որոշման և դիմումի հիման վրա, Միության վարչության որոշմամբ:

4.4. Հայկական կինոյի զարգացման գործում նշանակալի ավանդ ունեցող անձանց վաստակը ընդգծելու, նրանց ծառայությունը հայկական կինոյում գնահատելու և նրանց գործը հայկական կինոյի հանրահռչակմանը ծառայեցնելու նպատակով կարող է շնորհվել Միության Պատվավոր և Օտարերկրյա անդամի անդամություն: (*Միության Պատվավոր և Օտարերկրյա անդամության շնորհման հարցը լուծում է Միության Վարչությունը):*

4.5. Միության անդամների, միության Պատվավոր և Օտարերկրյա անդամների մուտքի վճարի և անդամավճարի կարգը, չափը, դեպքերը և ժամկետները սահմանում է Միության Վարչությունը:

4.6. Միության անդամ դառնալու ցանկություն ունեցող անձը գրավոր դիմում է Միության Վարչությանը՝ ներկայացնելով նաև անձնական թերթիկ, ստեղծագործական թերթիկ, ինքնակենսագրություն, ոչ պակաս, քան 3 (երեք) տարվա անդամության ստաժ ունեցող Միության 3 (երեք) անդամի գրավոր երաշխավորագիր, համապատասխան պրոֆեսիոնալ գիլդիայի երաշխավորագիր, կրթության վկայականի (դիպլոմի) պատճենը, պրոֆեսիոնալ աշխատանքները հաստատող նյութեր (ֆիլմեր, սցենարներ, գրքեր, էսքիզներ, հրապարակումներ և այլն՝ ըստ մասնագիտությունների): Գրավոր դիմումի, անձնական թերթիկի, ստեղծագործական թերթիկի, Միության անդամի երաշխավորագրի, պրոֆեսիոնալ գիլդիայի երաշխավորագրի ձևերը սահմանվում են Վարչության կողմից:

4.7. Միության անդամության մեջ ընդունելու հարցը լուծում է Վարչությունը:

4.8. Միության յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

4.9. Միության բոլոր անդամները կարող են մտնել ըստ մասնագիտությունների պրոֆեսիոնալ գիլդիաների կազմի մեջ:

4.10. Միության բոլոր անդամներն ունեն հավասար իրավունքներ և կրում են պարտավորություններ՝ անկախ կոչումից, պաշտոնից և Միությանն անդամակցության ստաժից:

5. ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. Միության անդամն իրավունք ունի՝

5.1.1. Սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով ընտրել և ընտրվել Միության կառավարման կամ վերահսկողություն իրականացնող մարմիններում:

5.1.2. Ներկա գտնվել Ժողովին անձամբ, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ նաև լիազորված անձի միջոցով:

5.1.3. Ծանոթանալ Միության մարմինների արձանագրություններին, ընդունած որոշումներին, փաստաթղթերին:

5.1.4. Միությունից պահանջել տեղեկություններ, ստանալ փաստաթղթերի պատճեններ՝ Միության կանոնադրության փոփոխությունների, վարչության նիստերի արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալ նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը, որոնք վերաբերում են վերջին երեք տարիներին:

5.1.5. Միության մարմինների որոշումները գրավոր բողոքարկել վերադասության կարգով:

5.1.6. Դատական կարգով բողոքարկել Միության մարմինների որոշումները՝ «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքով սահմանված կարգով:

5.1.7. Մասնակցել Միության գործունեության հիմնական փաստաթղթերի մշակմանը:

5.1.8. Ներկայացնել առաջարկություններ և դիտողություններ՝ Միության աշխատանքների վերաբերյալ:

5.1.9. Ստանալ մասնագիտական, իրավաբանական, կազմակերպչական և այլ բնույթի խորհրդատվություն՝ իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված:

5.1.10. Մասնակցել Միության կողմից անցկացվող միջոցառումներին:

5.1.11. Անարգել դուրս գալ Միությունից:

5.1.12 Միության անդամները Միության ծառայություններից օգտվում են յուրաքանչյուր ծառայության համար Միության Վարչության կողմից սահմանված կարգով:

5.2. Միության անդամը պարտավոր է՝

5.2.1. Կատարել Միության կանոնադրության պահանջները, և կառավարման մարմինների որոշումները: Բարեխղճորեն կատարել կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները:

5.2.2. Սահմանված կարգով և ժամանակին վճարել Միության մուտքի վճար և անդամավճար, եթե այդպիսիք սահմանված են:

5.2.3. Առավելագույնս և անձամբ նպաստել Միության նպատակների իրականացմանը, նրա հեղինակության բարձրացմանը և պահպանմանը, իր հրապարակային և այլ գործունեությամբ չարատավորել Միության, Միության անդամների հեղինակությունը:

5.2.4. Մասնակցել Միության ստեղծագործական, կազմակերպչական և այլ գործունեությանը:

5.2.5. Չօգտագործել Միության պաշտոնական ձևաթուղթը, կնիքը, խորհրդանշանը անձնական և այլ նպատակների համար՝ առանց Միության Վարչության կամ Նախագահի համաձայնության:

5.3. Միության անդամների համար երաշխավորվում է՝

5.3.1. Միության անդամ ընդունվելու մասին տեղեկատվության հրապարակայնությունը:

5.3.2. Միության տեղեկատվական բազայի տվյալներից օգտվելը:

5.3.3. Անձնական, Բանկային և առևտրային գաղտնիքների պահպանումը:

5.4. Սույն կանոնադրության 5.2.1., 5.2.2., 5.2.3., 5.2.4. ենթակետերում նշված պարտականությունները պարբերաբար չկատարած, ինչպես նաև Միության նպատակներին հակասող գործողություններ իրականացրած, Միության անդամին ոչ հարիր վարք և գործունեություն դրսևորած անդամների նկատմամբ կիրառվում են կարգապահական տույժեր՝ (նկատողություն, խիստ նկատողություն, անդամության կասեցում) ընդհուպ մինչև Միության անդամությունից հեռացնելը:

5.4.1. Միության անդամը հեռացվում է Միությունից նաև Օրենսդրությամբ սահմանված հիմքերի առկայության դեպքում՝ Վարչության որոշմամբ:

5.4.2. Միության Վարչության անդամի՝ երեք ամիս, Միության անդամի՝ վեց ամիս անընդմեջ անդամավճար չվճարելու դեպքում Միությանը տվյալ անդամի անդամակցությունը համարվում է կասեցված՝ մինչև Միության Վարչության որոշմամբ սահմանված ժամկետում չվճարված անդամավճարի ամբողջ գումարի վճարումը: Նշված ժամկետում անդամավճարի՝ չվճարված ամբողջ գումարի չվճարման դեպքում Միությանը տվյալ անդամի անդամակցությունը համարվում է դադարեցված: Սույն կետի համաձայն՝ Միության անդամակցությունը կորցրած անձը կարող է կրկին դառնալ Միության անդամ ոչ շուտ, քան անդամակցությունը կորցնելուց մեկ տարի հետո:

5.4.3. Բացառիկ դեպքերում Վարչությունը կարող է Միությունից հեռացման որոշման նախագիծը ներկայացնել Ժողովին: Ժողովը քվեարկում է բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ:

5.4.4. Միության անդամությունից հեռացման կամ դուրս գալու դեպքում մուծված մուտքավճարը և անդամավճարները վերադարձի ենթակա չեն:

5.4.5. Միության անդամակցությունը կորցրած կամ անդամակցությունը կասեցված անձի նոր անդամագրումը Միությանը, կամ կասեցման գործողության ժամկետի դադարեցումը կատարվում է ընդհանուր հիմունքներով:

5.4.6. Միության յուրաքանչյուր անդամին տրվում է վկայական: Վկայականի ձևը և հանձնման կարգը սահմանում է Միության Վարչությունը:

6. ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Միության կառավարման մարմիններն են Միության Ժողովը, Միության Վարչությունը, Միության գործադիր մարմինը՝ Նախագահը:

6.2. Միության կառավարման բարձրագույն մարմինը Միության Ժողովն է, որն ունի Միության գործունեությանն առնչվող ցանկացած հարցի վերջնական լուծման վերաբերյալ որոշում ընդունելու իրավունք:

6.3. Միության Ժողովը կարող է լինել հերթական կամ արտահերթ:

6.4. Հերթական Ժողովը հրավիրվում է 5 (հինգ) տարին մեկ անգամ՝ Միության Վարչության կողմից՝ անդամների համատեղ հավաքի ձևով:

6.5. Միության ժողովին կարող են մասնակցել Միության յուրաքանչյուր 30 անդամից 5 պատվիրակ համամասնությամբ ընտրված պատվիրակները:

6.6. Միության Ժողովի օրակարգի, նրա աշխատանքների սկսվելու տեղի, օրվա ու ժամի մասին մասնակիցները պետք է ծանուցվեն պատվիրված նամակով կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով, Միության Նախագահի և/կամ Վարչության որոշմամբ՝ պատշաճ ծանուցման այլ եղանակով՝ համագումարի անցկացման օրվանից առնվազն 14 աշխատանքային օր առաջ:

6.7. Միության անդամների առնվազն մեկ երրորդի, Միության նախագահի կամ Միության վերստուգող հանձնաժողովի սույն Կանոնադրությունից բխող պատճառաբանված պահանջի դեպքում, ոչ ուշ, քան հինգ օրվա ընթացքում, հրավիրվում է Միության արտահերթ Ժողով, որի օրակարգի, անցկացման տեղի, օրվա ու ժամի մասին մասնակիցները պետք է ծանուցվեն Ժողովի հրավիրման համար նախատեսված եղանակով, սակայն ոչ ուշ, քան այդ Ժողովի անցկացման օրվանից հինգ օր առաջ:

6.8. Արտահերթ Ժողով կարող է հրավիրվել նաև Միության վարչության անդամների առնվազն ½-ի պահանջով, հերթական Ժողովի հրավիրման համար նախատեսված եղանակով, դրա մասնակիցների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով՝ էլեկտրոնային հաղորդակցության միջոցների օգտագործմամբ՝ կազմելով համապատասխան արձանագրություն:

6.9. Նշված ժամանակում Միության նախագահի և/կամ Վարչության կողմից Ժողով չհրավիրելու դեպքում, կարող է Ժողով հրավիրել Միության անդամների 1/3-ը համախմբող խումբը:

6.10. Միության Ժողովն իրավազոր է, եթե հրավիրվել է Կանոնադրությամբ սահմանված կարգով, և եթե մասնակիցների թիվն ավելի է բոլոր անդամների կամ բոլոր պատվիրակների ընդհանուր թվի կեսից:

6.11. Միության Ժողովի ընթացքի արձանագրման փաստաթղթերը պահպանվում են 4 (չորս) տարի:

6.12. Միության Ժողովի բացառիկ իրավասությունն է.

6.12.1. Միության կանոնադրության հաստատումը, նրանում փոփոխությունների, լրացումների կատարումը կամ նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը:

6.12.2. 5 (հինգ) տարին մեկ Միության նախագահի կողմից յուրաքանչյուր տարի հաստատված Միության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունների հաստատումը:

6.12.3. Միության Վարչության և վերստուգող հանձնաժողովի անդամների թվաքանակի որոշումը:

6.12.4. 5 (հինգ) տարի ժամկետով Միության նախագահի, Միության Վարչության և վերստուգող հանձնաժողովի ընտրությունը, դրանց կազմի փոփոխումը կամ լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը:

6.12.5. Միության վերակազմակերպման մասին որոշման ընդունումը, գույքի փոխանցման ակտի կամ բաժանիչ հաշվեկշռի հաստատումը, բացի դատարանի վճռով վերակազմակերպումից:

6.12.6. Միության լուծարման մասին որոշման ընդունումը, բացի դատարանի վճռով լուծարումից:

6.12.7. Միության կառուցվածքի հաստատումը:

6.12.8. Միության նախագահի վարձատրության կարգի և պայմանների սահմանումը:

6.12.9. Այլ իրավաբանական անձի ստեղծումը, այլ կազմակերպությունում Միության մասնակցության մասին որոշման ընդունումը:

6.12.10. Միության մարմինների՝ իրավական ակտերի պահանջներին և սույն Կանոնադրությանը հակասող որոշումների գործողության դադարեցումը:

6.13. Միության բարձրագույն մարմինը չի կարող իր բացառիկ իրավասության հարցերի վերաբերյալ որոշում ընդունելու իրավունքը փոխանցել Միության այլ մարմնի:

6.14. Ժողովի բացառիկ իրավասության հարցի վերաբերյալ որոշումն ընդունվում է, եթե կողմ է քվեարկել Միության բոլոր անդամների կամ բոլոր պատվիրակների թվի կեսից ավելին, իսկ այլ հարցերի վերաբերյալ որոշումները՝ Ժողովի մասնակիցների կեսից ավելին: Եթե Ժողովում քննարկվում է Ժողովի որևէ մասնակցի կամ նրա հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա Ժողովի տվյալ մասնակիցը քվեարկությանը չի մասնակցում:

6.15. Ժողովի գործունեության կամ Ժողովի ընթացքում օրենքով և Միության Կանոնադրությամբ չկանոնակարգված իրադրություն (իրավիճակ) առաջանալու դեպքում հարցերը լուծվում են Ժողովի որոշմամբ:

6.16. Ժողովի արձանագրությունը ստորագրում են ժողովի նախագահողը և քարտուղարը:

6.17. Ժողովի որոշումը, որն ընդունվել է օրենքի կամ Միության Կանոնադրության խախտմամբ կամ ոտնահարել է Միության կամ նրա անդամի իրավունքներն ու օրինական շահերը, կարող է դատական կարգով անվավեր ճանաչվել Միության կամ

անդամի դիմումի հիման վրա: Դիմումը կարող է տրվել 60 օրվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ Միության անդամն իմացել է կամ պարտավոր էր իմանալ այդպիսի որոշման ընդունման մասին, եթե օրենքով այլ բան սահմանված չէ:

6.18. Միության Վարչությունը.

6.18.1. Առաջարկություններ է ներկայացնում Ժողովին նրա բացառիկ իրավասությանը վերաբերվող հարցերի վերաբերյալ:

6.18.2. Տալիս է համաձայնություն Միության նախագահի կողմից Միության հինգ միլիոն ՀՀ դրամը գերազանցող արժողությամբ ցանկացած տեսակի գույք, այդ թվում ֆինանսական միջոցներ տնօրինելու և կառավարելու համար:

6.18.3. Որոշում է ընդունում Ժողով հրավիրելու մասին:

6.18.4. Ընդունում է միության անդամ և հեռացնում անդամությունից:

6.18.5. Վերստուգող հանձնաժողովի առաջարկությամբ քննարկում է ֆինանսատնտեսական գործունեության ընթացիկ ուսումնասիրման արդյունքները:

6.18.6. Հիմնում է ՀՀ տարածքում և արտասահմանյան պետություններում ներկայացուցչություններ, մասնաճյուղեր և հիմնարկներ:

6.18.7. Ըստ անհրաժեշտության ձևավորում է Միության մշտական և ժամանակավոր հանձնաժողովներ:

6.18.8. Լսում է Միության Նախագահի՝ իր և Միության Վարչության տարեկան աշխատանքների մասին հաշվետվությունները:

6.18.9. Հաստատում է Գիլդիաների գործունեության կանոնները, կանոնակարգերն ու կարգերը:

6.18.10. Հաստատում է սոցիալական ծրագրերի իրականացման կանոնները, կանոնակարգերն ու կարգերը:

6.18.11. Հաստատում է մուտքի վճարի և անդամավճարի վճարման կարգը, չափը և ժամկետները:

6.18.12. Հաստատում է Միության անդամության ընդունելության գրավոր դիմումի, անձնական թերթիկի, ստեղծագործական թերթիկի, Միության անդամի երաշխավորագրի, պրոֆեսիոնալ գիլդիայի երաշխավորագրի ձևերը:

6.18.13. Հաստատում է Միության պարգևները, Միության Պատվավոր և Օտարերկրյա անդամների կարգավիճակը, շնորհում է պատվավոր անդամի և այլ կոչումներ//տիտղոսներ:

6.18.14. Ընտրում է Միության աուդիտն իրականացնող անձին, եթե օրենքի համաձայն Միությունը ենթակա է պարտադիր աուդիտի:

6.19. Վարչության նիստերը հրավիրվում և անց են կացվում ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս քան վեց ամիսը մեկ անգամ:

6.20. Վարչության նիստը իրավազոր է, եթե նիստին մասնակցում են Վարչության անդամների առնվազն 1/2-ը:

6.21. Վարչության որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում Միության նախագահի ձայնը համարվում է որոշիչ: Անհրաժեշտության դեպքերում Միության նախագահի որոշմամբ Վարչության իրավասությանը վերաբերվող ցանկացած հարց կարող է քվեարկվել հարցման միջոցով: Այդ դեպքում որոշումն ընդունվում է Վարչության ընդհանուր թվի պարզ մեծամասնությամբ:

6.22. Վարչության նիստերին պարտադիր հրավիրվում են Միության այլ մարմինների, հանձնաժողովների և մասնաճյուղերի ղեկավարները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

6.23. Միության անդամների նկատմամբ, Միության նախագահի ներկայացմամբ կիրառում է խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ:

6.24. Հաստատում է Միության՝ սույն կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացվող ձեռնարկատիրական գործունեության ուղղությունները:

6.25. Իրականացնում է իրեն վերապահված, ինչպես նաև ցանկացած այլ մարմնի՝ Միության Ժողովի, Միության նախագահի, Միության Վարչության և Վերստուգող հանձնաժողովի իրավասության մեջ չմտնող լիազորություններ:

6.26. Միության նախագահը.

6.26.1. Նախագահն ընտրվում է Ժողովի կողմից՝ 5 (հինգ) տարի ժամկետով: Միության գործադիր մարմինը Միության նախագահն է: Նախագահը ղեկավարում է Միության ընթացիկ գործունեությունը և վարում է ժողովի նիստերը:

6.26.2. Ապահովում է Ժողովի կամ Վարչության որոշումների կատարումը:

6.26.3. Ներկայացնում է Միությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում՝ առանց լիազորագրի:

6.26.4. Տալիս է լիազորագրեր:

6.26.5. Բանկերում բացում է Միության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ:

6.26.6. Իր իրավասության սահմաններում ընդունում է որոշումներ, արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը, կնքում է գործարքներ, ստորագրում է պայմանագրեր, ֆինանսական փաստաթղթեր:

6.26.7. Նշանակում և ազատում է կառուցվածքային ստորաբաժանումների, մշտական և ժամանակավոր հանձնաժողովների, առանձնացված ստորաբաժանումների լրատվական միջոցների, խորհրդակցական և այլ մարմինների ղեկավարներին, սահմանում է նրանց պարտականությունները:

6.26.8. Հաստատում է Միության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ նրա առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական և այլ կանոնները:

6.26.9. Սահմանում է Միության տարեկան ծախսերի նախահաշիվը, աշխատակազմի պաշտոնական գործառույթները, հաստիքացուցակը և աշխատավարձերի ցուցակը:

6.26.10. Ձեռք է բերում, տիրապետում, օգտագործում, տնօրինում և կառավարում է մինչև հինգ միլիոն դրամ արժողությամբ ցանկացած գույք, այդ թվում ֆինանսական միջոցներ միանձնյա, իսկ հինգ միլիոնից ավելի արժողությամբ ցանկացած գույք, այդ թվում ֆինանսական միջոցներ՝ Վարչության հետ համաձայնեցնելով:

6.26.11. Յուրաքանչյուր տարի հաստատում է Միության, ինչպես նաև նրա մարմինների հաշվետվությունները, Միության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները, որոնք 5 (հինգ) տարին մեկ անգամ Վերստուգող հանձնաժողովի եզրակացության հետ միասին ներկայացնում է ժողովի հաստատմանը:

6.26.12. Իրականացնում է Միության Ժողովի, Վարչության որոշումներով, օրենքով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

6.27. Միության վերստուգող հանձնաժողովը իրավասու է.

6.27.1. Տարին մեկ անգամ անցկացնել Միության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում:

6.27.2. Ծանոթանալ Միության գործունեությանն առնչվող բոլոր փաստաթղթերին և պարտադիր քննարկման ենթակա առաջարկություններ ներկայացնել Միության մարմիններին:

6.27.3. Առաջարկությունները Միության մարմիններին ներկայացվում է գրավոր կարգով, իսկ Միությունը պարտավորվում է տվյալ առաջարկության բնույթին և ծավալին համապատասխան ողջամիտ ժամկետում, բայց ոչ ուշ քան 30 օրվա ընթացքում քննարկման դնել ներկայացված առաջարկությունները:

6.27.4. Պահանջել և ստանալ Միության գործունեության վերաբերյալ տեղեկատվություն:

6.27.5. Իրականացնել սույն կանոնադրությամբ և Միության Ժողովի որոշումներից բխող այլ լիազորություններ:

6.28. Վերստուգող հանձնաժողովն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են տարեկան առնվազն 2 անգամ: Նիստ կարող է հրավիրվել նաև Միության և (կամ) վարչության անդամների 1/3-ի, վերստուգող հանձնաժողովի անդամների 1/3-ի, Միության նախագահի պահանջով:

6.28.1. Միության վերստուգող հանձնաժողովի նիստը իրավազոր է, եթե նիստին մասնակցում է նրա անդամների առնվազն 1/2-ը: Հանձնաժողովի որոշումները ընդունվում են բաց քվեարկությամբ, մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է: Միության վերստուգող հանձնաժողովը ստուգման արդյունքները ներկայացնում է նՄիության Վարչությանը, և Միության Ժողովին:

6.28.2. Միության վերստուգող հանձնաժողովի նախագահն ընտրվում է 5 (հինգ) տարի ժամկետով՝ Ժողովի կողմից: Նա մասնակցում է Միության Վարչության նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

6.28.3. Վարչության անդամները և Միության նախագահը չեն կարող լինել վերստուգող հանձնաժողովի անդամներ:

6.29. Միության գործունեության և գույքի օգտագործման վերաբերյալ հաշվետվությունները Ժողովի հաստատմանն են ներկայացվում դրանց վերաբերյալ վերստուգող հանձնաժողովի եզրակացության հետ մեկտեղ:

7. ՄԻՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՅԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1. Միությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

7.2. Միությունը որպես սեփականություն կարող է ունենալ անշարժ և շարժական գույք՝ շենքեր, շինություններ, բնակարանային ֆոնդ, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ, բաժնետոմսեր, արժեթղթեր, օրենքով չարգելված այլ գույք:

7.3. Միության սեփականությունը գոյանում է մուտքի վճարներից, անդամավճարներից, Միության անդամների ներդրումներից, դրամաշնորհներից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությունից, իր ստեղծած կամ իր մասնակցությամբ այլ առևտրային կազմակերպությունից ստացված միջոցներից, իր սեփականությունը հանդիսացող գույքի իրացումից, վարկերից, նվիրատվություններից, հանգանակություններից, կտակներից և օրենքով չարգելված այլ, այդ թվում՝ օտարերկրյա աղբյուրներից:

7.4. Միությունն իրեն պատկանող գույքը տիրապետում, օգտագործում և տնօրինում է սույն կանոնադրությամբ սահմանված նպատակների իրականացման համար ու այդ նպատակներին համապատասխան՝ օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

7.5. Միության հիմնադիրների և անդամների՝ սեփականության իրավունքով Միությանը հանձնած, ինչպես նաև այլ աղբյուրներից ստացված գույքը Միության սեփականությունն է:

7.6. Միության գույքը չի կարող բաշխվել նրա հիմնադիրներին և անդամներին:

7.7. Միության հաշվապահական հաշվառումը և վիճակագրությունը վարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. ՄԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

8.1. Միությունը կարող է լուծարվել Ժողովի որոշմամբ կամ դատարանի վճռով: Ժողովը կազմավորում է լուծարային հանձնաժողով և օրենքով նախատեսված կարգով սահմանում լուծարման կարգն ու ժամկետները: Միության լուծարման ավարտին

լուծարային հանձնաժողովը պարտադիր վճարումներն իրականացնելուց հետո մնացած գույքը Ժողովի որոշմամբ սահմանված կարգով օգտագործում է Միության կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար, իսկ եթե դա հնարավոր չէ, փոխանցում է պետական բյուջե:

8.2. Միության վերակազմակերպումը (միաձուլում, միացում, բաժանում, առանձնացում, վերակազմավորում) կատարվում է Ժողովի որոշմամբ:

8.2.1. Միության վերակազմակերպումը դատական կարգով հնարավոր է միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

8.2.2. Միությունը կարող է միաձուլվել այլ կազմակերպության (կազմակերպությունների) հետ:

8.2.3. Միությունը կարող է միանալ այլ կազմակերպությանը:

8.2.4. Միությունը կարող է բաժանվել այլ կազմակերպությունների:

8.2.5. Միությունից կարող է (են) առանձնանալ կազմակերպություններ:

8.2.6. Միությունը իրականացնում է օրենքով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

05